«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՊԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ՈՒՍՈՒՑԻՉԸ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ ՁԵՎԱՎՈՐՈՂ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱՔԱՐ

Առարկան՝ ՆԶՊ

Հետազոտող ուսուցիչ՝ Վրեժ Վենյամինով

Ուսումնական հաստատություն՝ Կ.Զարյանի անվան հ.117դպրց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

ԳԼՈՒԽ 1

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ ՁԵՎԱՎՈՐՈՂ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱՔԱՐ 5

ԳԼՈՒԽ 2

ՆՁՊ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 8

2.1. ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ 10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 19

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մենք կարծում ենք, որ բարոյական հարցերում մեր կայացրած յուրաքանչյուր որոշում ազդում է հասարակության ճակատագրի վրա…

Դեյվիդ Հյում

Հասարակության որակը կախված է զարգացած, կրթված անհատներից, որոնք պետք է կազմեն հասարակության բովանդակային կորիզը, պետք է պատասխանատու և ծանրակշիռ լինեն ոչ միայն իրենց մասնավոր կյանքի ու կյանքի որակի համար՝ անհաղորդ ու անտարբեր մնալով հասարակությանը և ազգային խնդիրներին, այլև պետք է լինեն ակադեմիական հիմնարար գիտելիքներով զինված, մեր ժամանակների նորագույն ձեռքբերումներին քաջատեղյակ, ազգային գործոնն առաջ մղող, մարդկային բարձր արժանապատվությամբ և շրջահայեցությամբ օժտված առաջնորդներ, որոնք կհամալրեն հանրային կյանքի բոլոր բնագավառները:

Բարեփոխությունների անշրջելի ընթացքը ժամանակակից կրթական համակարգի առանձնահատկությունն է: Կրթական ոչ մի համակարգ չի կարող արդյունավետ գործել համաշխարհային կրթական գործընթացներից դուրս և այդ ամենից մեկուսացած: Գիտության, տեխնիկայի աննախադեպ առաջընթացը նոր մոտեցումներ ու պահանջներ է սահմանում նաև կրթամշակութային ոլորտի համար:

Հանրակրթության ոլորտում տեղի ունեցող համակարգային փոփոխությունները, որոնք պայմանավորված են համաշխարհային զարգացումներով, ենթադրում են ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և վերաիմաստավորում, կրթության ոլորտում ազգային առանձնահատկությունների և միջազգային փորձի արդյունավետ համադրում: Այս 2 պայմաններում արդեն կարևոր խնդիր է դառնում պետական-ազգային մտածողություն ունեցող և կյանքի արագընթաց զարգացումներին հաղորդակից անհատի ձևավորումը, ինչի իրականացմանն էլ պետք է ուղղված լինի կրթական քաղաքականությունը: Բայց նախ և առաջ ուսուցիչն ինքը պետք է լինի այդպիսին:

Այս հետազոտական աշխատանքի շրջանակում կանդրադառնանք այն

արժեքային համակարգին, որը պետք է սովորողը կրի իր մեջ, կսահմանենք արժեհամակարգի ձևավորման քայլարշավ, կառանձնացնենք այն թեմաները որոնք լավագույնս են նպաստում արժեհամակարգի ձևավորմանը և այլն: Սահմանենք այս հետազոտական աշխատանքի նպատակը և այդ նպատակից բխող խնդիրները:

Հետազոտության նպատակը՝ բացահայտել առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման գործընթացի էությունը:

Հետազոտության խնդիրները՝

1. ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը, 2
. վերլուծել դասապրոցեսը ,
3. սահմանել արժեքային համակարգի ձևավորման ուղիները, 4
. սերտորեն համագործակցել գործընկերների հետ:

ԳԼՈՒԽ 1

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ ՁԵՎԱՎՈՐՈՂ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱՔԱՐ

Նյութական և սոցիալական շատ արժեքներ ժամանակի ընթացքում փոփոխվում են: Որոշ ավանդույթներ, որոնք կարևորվում էին սրանից տասնամյակներ առաջ, այսօր էական արժեք չեն ներկայացնում: Ժամանակի ընթացքում հայացքները, կարծիքները, արժեքները փոփոխվում են: Յուրաքանչյուր ժամանակաշրջան առանձնանում է իր սերնդին բնորոշ առանձնահատկություններով, որոնք ունեն իրենց արժեքային կողմնորոշումները, նախասիրությունները և պահանջմունքները: Բնական է, որ ծնողների կողմից ընդունված հասարակական կյանքի նորմերը տարբերվում են հաջորդ սերնդի հայացքներից, որից էլ կարող են առաջանալ միջսերնդային հակասություններ: Դրանից անջրպետ է առաջանում երկու սերունդների սոցիալական չափանիշների ու արժեքների միջև, և կրտսեր սերունդը կարող է բացասական վերաբերմունք դրսևորել ավագ սերնդի արժեքների և հայացքների նկատմամբ: Այստեղ մեծ անելիք ունի ավագ սերունդը: Ընտանիքի առջև ծառացած խնդիրներից մեկը պահանջում է սերունդների վրա գաղափարական ազդեցության տարբեր ձևերի ու միջոցների խելացի գործադրում, որի համար անհրաժեշտ է օգտագործել նախորդ սերունդների՝ անցյալում կուտակված արժեքավոր փորձը, մասնավորապես ազգային ավանդույթները: Այսօր հասարակություն են ներթափանցել մեր ազգին ոչ հարիր արժեքներ, որոնք խաթարում են երեխայի անձի ձևավորման գործընթացը, դաստիարակությունը: Փոփոխությունն ինքնին դրական երևույթ է, սակայն կարևոր է, որ այն լինի բնականոն: Եթե փոփոխությունը տեղի է ունենում այդ համատեքստից դուրս, ապա խաթարվում է արժեքային համակարգը:

Նման իրավիճակում խիստ կարևորվում են ավանդական արժեքների պահպանումն ու փոխանցումը: Սոցիալական ինստիտուտների մեջ անգնահատելի է ընտանիքի դերը, որպես մարդկության կողմից պատմական երկարատև զարգացման ընթացքում ստեղծված մեծագույն արժեք, որի զարգացմամբ շահագրգռված են և՛ հասարակությունը, և՛ պետությունը: Երկար դարերի ընթացքում հայ ժողովուրդը

մշակել է իր վերաբերմունքը ընտանիքի նկատմամբ, քանի որ այն հայերի համար մեծագույն սրբություն է և սոցիալական կյանքի հիմք: Ընտանիքը սերտորեն կապված է պետության և հասարակության զարգացման հետ: Այն շատ արագ արձագանքում է հասարակության մեջ տեղի ունեցող բոլոր դրական

և բացասական փոփոխություններին: Սակայն ընտանիքը միշտ չէ, որ համապատասխանության մեջ է գտնվում տվյալ դարաշրջանի սոցիալ–տնտեսական իրականության հետ: Նրա դրսևորման հիմքերից մեկը ընտանիքի կենցաղավարման միջավայրն ու փոփոխվող սոցիալ–քաղաքական պայմաններն են: Այս առումով կարևոր նշանակություն ունի ընտանեկան կենցաղում տեղ գտած մի շարք սովորույթների ծագման, պատմական զարգացման ընթացքում դրանց փոփոխությունների, կենցաղավարման ձևերի բացահայտումը[1]:

Մարդկության կողմից ստեղծված նյութական և հոգևոր արժեքներն իրենց արտացոլումն են գտնում կրթության և դաստիարակության բովանդակության մեջ, մանկավարժի ստեղծագործական գործունեության միջոցներում: Մանկավարժական մշակույթը ընդհանուր մշակույթի մի մասն է, այդ մասին ժամանակին գրել են Յան Ամոս Կոմենսկին, Մ. Վ. Լոմոնոսովը, Կ. Դ. Ուշինսկին: Ըստ Վ. Ա. Սուխոմլինսկու՝ մանկավարժական մշակույթի մեջ պետք է առանձնացնել հետևյալ բաղադրիչները՝

• մարդասիրությունը, աշակերտի մտքին և սրտին անմիջականորեն դիմելը,

• իր առարկայի խոր իմացությունը, մանկավարժական գործընթացի բոլոր նրբություններին տիրապետելու ունակությունը, մանկավարժի հուզականությունը, զգայունակությունը, զգացմունքայնությունը,

• գործունեության տարբեր ձևերում երեխայի անհատական, տարիքային, հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման մեթոդների հարստությունն ու բազմազանությունը,

• մանկավարժի ստեղծագործական լաբորատորիայի առկայությունը,

• մանկավարժի գործունեության մեջ հոգեբանական ամուր հիմքը,

• ուսուցչի լեզվական մշակույթը, խոսքի մատչելիությունը, տրամաբանությունը, դիտողականությունը, ինքնավերահսկումը, արտահայտչամիջոցների հղկվածությունը[2]: Մանկավարժի վարքը ուսուցչի անհատական մանկավարժական

մշակույթի դրսևորումն է: Մանկավարժական մշակույթը այն հիմնաքարն է, որի վրա

---

[1]Անաստասյան Բ. Հ., Ազգային ավանդույթների, սովորույթների դերը երեխաների ընտանեկան դաստիարակության գործում, Ընտանիք և ազգային հոգեբանություն նյութերի ժողովածու, Եր., ՀՀ լուսավորության նախարարության մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտ, 1991, 149 էջ:

[2]Сухумлинский В. А., Избранные педагогические сочинения в 3 т., т. 1, стр. 87,

ձևավորվում է ուսուցչի մանկավարժական վարպետությունը: Մանկավարժական մշակույթի կառուցվածքը բազմաշերտ է և ներառում է բարոյական տեսանկյուններ, անձի հոգևոր ներաշխարհի դրսևորման միջոցները հաղորդակցման և գործունեության մեջ: Ապագա մանկավարժի արտաքին և ներքին մշակույթի փոխադարձ կապը նպաստում է մասնագիտական իդեալի վերաբերյալ պատկերացումների որոշակիացմանը, այդ իդեալին հասնելու ուղիների որոնմանը:

Մանկավարժական մշակույթը մի կողմից ըմբռնվում է որպես ուսուցչի հոգևոր–բարոյական մշակույթ, մանկավարժական գործունեության մշակույթ (նպատակ—միջոցներ—արդյունք—վերլուծություն), մտածողության, ստեղծագործական մշակույթ, գործունեության մեջ ինքնարտահայտման և անդրադարձ կատարելու ունակության, երեխային հոգեբանամանկավարժական աջակցության մշակույթ: Այսպիսով՝ մանկավարժական մշակույթը ձևավորվում և զարգանում է ընդհանուր մշակույթի հիման վրա: Այն հոգեբանամանկավարժական համոզմունքների և վարպետության, ընդհանուր զարգացման և մասնագիտական–մանկավարժական հատկանիշների միասնություն է: Միաժամանակ մանկավարժական մշակույթը տարբեր «մշակույթների» իմացական, հաղորդակցական, մեթոդաբանական, խոսքի զարգացման և այլն, պարզագույն հանրագումար չէ: Դա ամբողջական կրթություն է, որը դրսևորվում է մի կողմից՝ որպես ուսուցչի մանկավարժական վարպետության բաղադրիչ, մյուս կողմից՝ որպես մանկավարժական վարպետության ձևավորման գործընթացում ձեռք բերված արժեք:

Հասարակության որակը կախված է զարգացած, կրթված անհատներից, որոնք պետք է կազմեն հասարակության բովանդակային կորիզը, պետք է պատասխանատու և ծանրակշիռ լինեն ոչ միայն իրենց մասնավոր կյանքի ու կյանքի որակի համար՝ անհաղորդ ու անտարբեր մնալով հասարակությանը և ազգային խնդիրներին, այլև պետք է լինեն ակադեմիական հիմնարար գիտելիքներով զինված, մեր ժամանակների նորագույն ձեռքբերումներին քաջատեղյակ, ազգային գործոնն առաջ մղող, մարդկային բարձր արժանապատվությամբ և շրջահայեցությամբ օժտված առաջնորդներ, որոնք կհամալրեն հանրային կյանքի բոլոր բնագավառները:

ԳԼՈՒԽ 2

ՆԶՊ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Նախնական զինվորական պատրաստություն առարկայի դասավանդումը համապետական կարևորագույն խնդիր է: Որպեսզի այսօրվա աշակերտը ՝ վաղվա հայոց բանակի զինվորը , իմանա թե ի՞նչն է պաշտպանելու, ինչու՞, ումի՞ց, ինչպե՞ս , նա այսօր արդեն աշակերտական սեղանից պետք է իմանա այդ հարցերի պատասխանը: Հայրենիքը բացարձակ արժեք է, հայրենասիրությունը՝ բարոյականության բաձր մակարդակ, արժեքային համակարգում ամենից կարևորն ու առաջնայինը: Անժխտելի է, որ հայրենասիրությունը հանդիսանում է ազգի, ժողովրդի, հասարակության, պետության, սոցիալական հանրույթի, անհատի գոյատևման անբաժանելի բաղադրիչը, իսկ հասարակության և պետության դիալեկտիկական գոյատևումն անհնար է պատկերացնել առանց այդ իսկ կառույցների միասնության, ամբողջականության, դինամիկ ու բարեհաջող զարգացման կարևորագույն պայման հայրենասիրության:

Վերջինս բնութագրվում է որպես բարդ, բովանդակային առումով բազմաբաղադրիչ երևույթ, որն ունի զարգացման տարբեր փուլեր և մակարդակներ: Դրսևորումներ, որոնք ակնառու են դառնում հասարակական կյանքի բոլոր կարևորագույն ոլորտներում ու ամենատարբեր ձևերով:

Ազգային արժեհամակարգով երիտասարդ սերնդի ձևավորման գործում կարևոր դեր է խաղում հայրենասիրական դաստիարակությունը, որով սերմանվում է հայրենիքի հանդեպ սեր և նվիրվածություն, երկրի առաջընթացին սեփական ջանքերով նպաստելու ձգտում:

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը ուսումնական հաստատություններում իրականացվում է հայրենիքի հանդեպ սեր սերմանելու, շրջակա բնության և մարդկանց հանդեպ պատասխանատու վերաբերմունքի և սերունդների միջև կայուն կապ ձևավորելու, հայրենիքը անհրաժեշտության ժամանակ պաշտպանելու և դրան պատրաստ լինելու նպատակով: Այս արժեքների

ձևավորումը տեղի է ունենում երեխայի հետ նպատակային, համակարգված աշխատանքի արդյունքում:

Ներկայացնենք ՆԶՊ-ի տեղը ազգային արժեքային համակարգի մեջ ըստ գործընկերների:


ՆՁ Պ-ի
տեղը
ազգայինն
ազգայինն համ.
ՆՁ Պ

2.1. ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ

Աշխատանքի կազմակերպման ձևերն ու մեթոդները

Ռազմահայրենասիրական դաստիարակության ծրագիրը ենթադրում է, առաջին հերթին, այս ուղղությամբ ներքին մեթոդական աշխատանքների կազմակերպում: Քանի որ եթե ՆԶՊ առարկա դասավանդող ուսուցիչը ինքը չի զգում հայրենիքի հանդեպ սիրո, հայրենիքը պաշտպանելու պարտքի զգացում, ապա նա չի կարողանա այն փոխանցել երեխաներին, ուսուցիչը նաև պետք է իմանա, թե ինչպես հայրենասիրության գաղափարներն առավել արդյունավետ փոխանցել երեխաներին: Ուսումնական հաստատություններում հայրենասիրական դաստիարակության վերաբերյալ մեթոդական աշխատանքն ուղղված է մանկավարժների որակավորման բարձրացմանը, նրանց մանկավարժական գրագիտությանը: Դրա համար անցկացվում են ուսուցիչների թեմատիկ խորհուրդներ, խորհրդակցություններ, դասերին փոխադարձ հաճախում:

Մեր մեթոդական աշխատանքի երկրորդ մասը ծնողների, երեխայի ընտանիքի հետ փոխգործակցությունն է, քանի որ դրանք էական ազդեցություն ունեն երեխայի անհատականության ձևավորման վրա, և կարևոր է նրանց ասել երեխաների բարոյական և հոգևոր արժեքների հաջող զարգացման հիմնական ուղղությունները: Ծնողների հետ անցկացվում են թեմատիկ հանդիպումներ, զրույցներ:

Երեխաների ռազմահայրենասիրական դաստիարակությունը կազմակերպելիս ես

- հայրենասիրական անկյունների կազմակերպում ուսումնական հաստատությունում;
- էքսկուրսիաների կազմակերպում հայրենի երկրի տեսարժան վայրեր, այցելություն թանգարաններ, ցուցահանդեսներ;
- թեմատիկ միջոցառումների կազմակերպում (արձակուրդներ, ծննդյան օրեր, մրցույթներ, մրցույթներ);
- անցկացնել թեմատիկ նստաշրջաններ-քննարկումներ հայրենիքի հանդեպ սիրո թեմայով, կարդալ համապատասխան գործեր, բանաստեղծություններ անգիր, ֆիլմեր դիտել, հաղորդումներ:

Իմ նախատեսած միջոցառումների և դասերի թեմաների մոտավոր ցուցակը ներառում է.

- Պետական և ազգային տոներին նվիրված միջոցառումներ,
- սպորտային մրցումներ,
- բնության, առանձնահատկությունների, հայրենի երկրի ավանդույթների, պետական խորհրդանիշների ուսումնասիրության թեմատիկ դասընթացներ:

Ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպման և իրականացման համար արդյունավետ եմ համարում նաև հանդիսավոր միջոցառումների իրականացումը:

Հանդիսավոր միջոցառումներ՝ նվիրված պետական տոներին

Ուսումնական հաստատություններում հայրենասիրական դաստիարակության միջոցառումները սովորաբար ժամանակավորվում են, որպեսզի համընկնեն համապատասխան պետական տոների նշման հետ, ինչպիսիք են Հաղթանակի օրը, Հայրենիքի պաշտպանի օրը, Բանակի օրը, Անկախության օրը և այլն:

Միջոցառմանը նախապատրաստվելիս երեխաները կսովորեն տոնի պատմությունը, կհասկանան, թե ում է նվիրված և ինչու է այն նշվում:

Օրինակ՝ Հաղթանակի օրվա տոնակատարությանը նախապատրաստվելիս անցկացնում ենք «Խաղաղության աղավնի» արշավը՝ երեխաների հետ միասին պատրաստելով սպիտակ թղթե աղավնիներ՝ որպես խաղաղ կյանքի խորհրդանիշներ: Միջոցառման համար սովորում ենք ռազմական երգեր («Իմ հայրենիք», «Հաղթանակի օր» և այլն), համապատասխան թեմայի բանաստեղծություններ: Տոնական առավոտը դպրոցում սկսվում է մեր միջոցառմամբ, որը տեղի է ունենում դպրոցի բակում:

«Պատերազմ և խաղաղություն» ծրագրի շրջանակներում հանդիպում ենք կազմակերպում պատերազմի վետերանների հետ: Երեխաները զրուցում են , հարցեր տալիս, իսկ վետերանները պատմում են նրանց ապրած պատերազմական օրերի

մասին։ Սա շատ հետաքրքիր աշխատանք է և հարցման արդյունքում պարզել ենք, որ երեխաներին այսպիսի աշխատանքը շատ է դուր գալիս։

Ռազմահայրենասիրական դաստիարակության իրականացման նպատակով կարևորև է ուսուցիչների համագործակցությունը, միջառարկայական և ներառարկայական կապեր ստեղծելը։ Օրինակ Հայոց լեզվի , գրականության, Հայոց

պատմության ուսուցիչների հետ համագործակցելու արդյունքում ստացվեց հիանալի միջոցառում ՝ նվիրված Հայաստանի Անկախությանը։ Միջոցառումը տեղի ունեցավ դպրոցի բակում ։ Հատընտիր բանաստեղծություններով և երգերով , պատմական դրվագներով և զինվորական ֆլեշմոբով իրականացված այդ միջոցառումը սիրվեց հանդիսատեսի կողմից։ Երեխաները մեծ ոգևորությամբ էին մասնակցում այդ միջոցառմանը և սիրով էին յուրացրել մատուցվող նյութը։

Ռազմահայրենասիրական դաստիարակություն ես իրականացնում եմ բերելով մի շարք իրական օրինակներ ։ Իմ դասին անդրադառնում եմ մեր քաջարի զինվորների՝ Ալբերտ Հովհաննիսյանի, Ռոբերտ Աբաջյանի, Շահեն Գալստյանի և էլի շատուշատ քաջորդիների սխրանքներին, ովքեր հայրենիքի համար օրհասական պահին առ ոչինչ համարելով մահը պայքարեցին հանուն հայրենիքի ազատության և վաղվա գալիքի, հանուն այն աշակերտների ապագայի, ովքեր պետք է մշտապես երախտապարտ լինեն նրանց և իրենց գործը շարունակողները դառնան։

9-րդ դասարանում ներկայացրեցի տեսաֆիլմ մեր 44-օրյա պատերազմի մասնակիցների մասնակցությամբ ։ Տեսասահիկն ամրապնդեց ստացած գիտելիքները , նրանք ճանաչեցին մեր հերոսներին անուն առ անուն , ցանկացան նմանվել իրենց , դառնալ նրանցից մեկը։ Իսկ որպեսզի ամուր լինեն ստացած գիտելիքները ես դպրոց հրավիրեցի ՈՄԱ ընկերության ներկայացուցչի , իսկ վերջինս սիրով ներկայացրեվ ՈՂՋ ՄՆԱԼՈՒ ԱՐՎԵՍՏԸ , ցույց տվեց մի շարք հնարներ ռազմական դրության ժամանակ ինքնապաշտպանվելու, հարկ եղած դեպքում ուրիշին օգնելու և սեփական կյանքը փրկելու համար։

Հայրենիքի պաշտպանի օրվա տոնակատարությանը նախապատրաստվելիս տղաները ձևավորում են այն գաղափարը, որ նրանք ապագա տղամարդիկ են, ուժեղ և հզոր, իրենց ընտանիքը,հարազատները, Հայրենիքն ունի նրանց կարիքը։ Տոնի առթիվ ես անցկացրեցի մի շարք միջոցառումներ ՝ կախված երեխաների տարիքից, օրինակ ՝ հայրերին շնորհավորելով ռազմական թեմայի բանաստեղծություններով, երգերով և պարերով, մարզական և մրցակցային մրցույթներով հայրիկներին շնորհավորելու տոն, մեր երկիրը պաշտպանող բանակին նվիրված «Խաղաղություն է պետք» դաս-զրույց, իսկ մեր դաս-զրույցին ակտիվորեն մասնակցեցին նաև այն

հայրիկները, ովքեր կամավորներ էին դարձել մեր երկրի համար օրհասական պահին և պահում էին հայրենիքի սահմանը։ Ահա այսպես քայլ առ քայլ ձևավարվում է արժեքային համակարգ, որն ամուր տեղ կգտնի սովորողների սրտում։

Երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջությունն ապահովելը դպրոցի պարտականությունն է: Դպրոցը պետք է մանկավարժական գործունեությունը համատեղի երեխայի հանդեպ հոգատարության հետ. ցույց տա նրան մանկավարժական, հոգեբանական, ֆիզիկական և մշակութային օգնություն: Հասկանալի է, որ ուսուցիչներն այստեղ կարևոր դերակատարում ունեն: Առանձնակի կարևորություն է ստանում ֆիզկուլտուրայի ժամերի արդյունավետ օգտագործումը: Ոչ միայն կոփել երեխաների մարմինը, այլ նաև սերմանել այն գիտակցությունը, որ առողջ մարմնում միայն կարող է լինել առողջ հոգի: Առողջ ապրելակերպի պահանջն այսօր առավել քան արդիական է: Ռազմահայրենասիրական դաստիարակություն իրականացնելիս կարևորում եմ իմ և ֆիզկուլտուրայի ուսուցչի համագործակցությունը և մեր առարկաների միջև կապ ստեղծելը:

Ֆիզիկական զարգացումը կրթական գործընթացի բաղկացուցիչ մասն է: Սպորտային խաղերն ու մրցումները ոչ միայն զարգացնում են երեխաները, այլև կազմում են թիմի, հետաքրքրությունների միասնության զգացում, ամրացնում ընտանեկան կապերն ու ավանդույթները:

Համապատասխան թեմայով մրցումներ անցկացրեցինք նույն տարիքի խմբերի միջև, օրինակ : Մրցումների ընթացքում երեխաները ծանոթանում են հերոսներին: Նման մրցույթներն անցկացրեցինք .

- «Սուրհանդակ» - գնդակներ նետելը թիրախին:
- Պատերազմի ձգում
- «Արագ ձիավորող» - ռելե ձիերի կամ մեծ գնդակների մեջ փոխանցումավազք:
- «Ամենաուժեղը» ՝ հակառակորդին ուսով դուրս մղելով շախմատից:
- «Հերոսական օգնություն». Քարանձավի մուտքը խորանարդի մեջ ապամոնտաժել և փրկել գեղեցիկ աղջկան, խաղերով :

Աշակերտները մեծ ոգևորությամբ էին մասնակցում և նրանք չէին էլ նկատում թե

ինչպես են զուգահեռաբար ձեռք բերում մնայուն գիտելիքներ , կարողություններ և հմտություններ։

Հատուկ դեր է խաղում երեխաների և ծնողների համատեղ մրցումները։ Հայրենիքի պաշտպանի օրը նշելիս մենք կազմակերպեցինք ռազմական խաղ, որին հայրիկներն

ու որդիները մասնակցում են փոխանցումավազքի, իսկ մայրերն ու դուստրերը երկրպագուների մրցումներին: Նման խաղը խթանում է կոլեկտիվիզմի, հայրենասիրության զգացումը, հետաքրքրություն է առաջացնում ֆիզիկական վարժությունների նկատմամբ, զարգացնում հիմնական ֆիզիկական որակները և ծանոթացնում մեծ սպորտի ավանդույթներին:

Երկրի պետական խորհրդանիշների ուսումնասիրության համար անցկացրեցի զրույց. օրինակ՝ «Սիրիր քո հայրենիքը», «Հայաստանի խորհրդանիշներ»:

Այս դասի նպատակն է սերմանել երեխաների հպարտությունը իրենց երկրում, համախմբել և ընդլայնել գիտելիքները պետական խորհրդանիշների մասին, ծանոթանալ դրոշի և զինանշանի գույների նշանակությանը, կազմել ամենապարզ աշխարհագրական գիտելիքները իրենց երկրի վերաբերյալ, խթանել դրոշի, զինանշանի, օրհներգի նկատմամբ հարգանքի զգացմունքներ, ինչպես նաև ճանաչողական հետաքրքրություն սերմանել: Դասն անցկացրեցի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով: Դա անելու համար հարկավոր է պատրաստել ներկայացում տվյալ թեմայի շուրջ, գույք կազմել հիմնի աուդիոձայնագրման վրա:

Դասի հաջորդականությունը հետևյալն էր.

1. Ներածական մաս, որում երեխաները ծանոթանում են երկրի աշխարհագրական դիրքին և չափերին:
2. Ծանոթություն Հայաստանի դրոշին, նրա ստեղծման պատմությանը , նրա գույների խորհրդանիշներին: Խաղացինք «Fold down the flag» խաղը:
3. Ծանոթություն զինանշանի հետ, ստեղծման պատմությանը: Երեխաներին բացատրեցի զինանշանի գաղափարը, վարեցի «Մտածիր և նկարիր քո ընտանիքի զինանշանը» խաղ:
4. Ազգային օրհներգի ունկնդրում, ստեղծման պատմություն:

5. Վերջնական մասը, որը ստուգում է, թե ինչպես են երեխաները սովորել նյութը:

ԹԵՄԱՆ՝ Իմ փոքր հայրենիքի մեծ պատմությունը

Մեր Հայրենիքի ցանկացած անկյուն յուրովի է և առանձնահատուկ: Կարևոր է սովորողին ներկայացնել իր հարազատ երկրի բնության գեղեցկությունը, նրա ավանդույթներն ու կյանքը:

Լուծումներից մեկը ուսումնական հաստատությունում տեղական գիտությունների մինի թանգարան կազմակերպելն է: Դրանում կարող եք հավաքել հնառճ իրերի հավաքածու, որոնք բնութագրում են առօրյա կյանքը, ժողովրդական արվեստի նմուշներ (ասեղնագործություն, անձեռոցիկներ, սփռոցներ, ամուլետներ, սպասք, խաղալիքներ), ես ներկայացրել էի ռազմական զինամթերքը, դասն անցկացրեցի ներկայացնելով մի շարք զենքեր:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն իրականացնելու մեկ այլ մեթոդ է էքսկուրսիաներն ու տեսարժան վայրերը:

Անցկացնում եմ նաև ճանաչողական դասեր: Դասընթացների համար ընտրվում են հայրենասիրական դաստիարակության վերաբերյալ համապատասխան թեմաներ: Երեխաները սովորում են իրենց հայտնի հայրենակիցների, հայրենի բնակավայրի առաջացման և զարգացման պատմության, տարածաշրջանի բնական հատկությունների մասին, ուսումնասիրում են բանահյուսությունը: Այս հարցում ինձ օգնեց Գրականության ուսուցիչը:

Սովորողներին շատ դուր եկավ համակցված դասը, իսկ կոլեգաների հետ համագործակցությունն ավելի արդյունավետ սվորողների մեջ արժեքային համակարգ ձևավորելու ժամանակ:

Ուսումնական հաստատությունում իրականացվող համակարգված աշխատանքը թույլ է տալիս երեխաների մեջ սերմանել պատմության, հայրենի երկրի աշխարհագրության, զարգացման և ձևավորման առանձնահատկությունները:

Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը բավականին արդիական է: Դա պայմանավորված է մեր հասարակության մեջ նյութական արժեքների գերակայությունը հոգևոր արժեքներից: Այնուամենայնիվ, մատաղ սերնդի դաստիարակությունը Հայրենիքի հանդեպ հարգանքի և սիրո շրջանակներում կազմում է բարոյապես առողջ, կենսունակ բնակչություն՝ որոշակի

արժեհամակարգով [3] :

[3]Железовская Г. И., Формирование педагогической интелектуальной культуры // Педагогика, 1995, № 2,

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Առարկա՝ ՆԶՊ

Դասարան՝ 9-րդ

Ուսուցիչ՝ Վենիամինով Վրեժ

Դասի թեման՝ Հայկական բանակը հին և միջին դարերում: Հաղթական ճակատամարտեր[4]

Դասի տեսակը՝ հաղորդման

Նպատակը՝ Արժեքային համակարգի ձևավորում, միջառարկայական կապերի հաստատում, հայրենասիրական դաստիարակության իրականացում:

Մեթոդները՝ դասախոսություն, զրույց, 5-րոպեանոց շարադրանք

Միջոցները՝ դասագիրք, աշխատանքային տետր,սահիկաշար, պաստառ, Մովսես Խորենացու «Հայոց պատմություն».

Ընթացքը՝

ԽԻԿ համակարգ

Խթանմալ փուլ

Քայլ 1

Հարցման միջոցով պարզում ենք, թե սովոողներն ինչ գիտեն տվյալ թեմայի վերաբերյալ, իրականացվում է զրույց :

Քայլ 2

Առաջարկում ենք լրացնել հարցաթերթիկ, որը գիտելիքների ստուգման մասին է և պարզ է դառնում, թե սովորողներն ինչ գիտեն նախորդ դասարաններից, կամ ինչ են

սովորել այլ առարկաներից տվյալ թեմայի շուրջ։

---

[4] Տես՝ Օհանյան, Վ., Մարգարյան Ս., Առաքելյան Վ., Գաբրիելյան Հ., Ղազարյան Լ., Աստանյան Վ., Ալավերդյան Ռ., Մաթևոսյան Հ., Վիրաբյան Ա., Հովհաննիսյան Ս., Նախնական զինվորական պատրաստություն, 9-րդ դասարան, Երևան, 2015, էջ 4,

Իմաստի ընկալման փուլ

Քայլ 1

Սահիկաշարի միջոցով ներկայացվում է նոր նյութը, որը որպես դասախոսություն գրի են առնում սովորողները և որպեսզի դասն ավելի արդյունավետ լինի և նաև հետաքրքիր՝ անդրադառնում ենք բանահյուսական ժանրի ստեղծագործություններին՝ առասպելներին և գրականության այլ գոհարներին: Զրույց է ծավալվում հայկական բանակի և հերոսական սկզբի՝ Հայկ Նահապետի և Բելի մարտի մասին: Սովորողները քաջատեղյակ էին և կարողացան ներկայացնել առասպելը, իսկ դասի արդյունավետության բարձրացման համար ընթերցեցինք Մովսես Խորենացու «Հայոց Պատմություն»-ից մի հատված, երբ Հայկը դիմում է իր զորքին: Էլեկտրոնային գրատախտակին ներկայացրեցինք Հայկի կերպարը: Տղաները ցանկացան նմանվել մեր նախահորը, լինել քաջ և հայրենասեր:

Միմյանց հաջորդելով էկրանին ցուցադրվում է Տիգրանակերտը, Արտագերս ամրոցը, Ավարայրի ճակատամարտը, Տոմուտ գետը, Տիգրան Մեծն ու իր զորքը, Արշակունիների արքայատոհմը, Արշակ Երկրորդն ու Պապ թագավորը և այլն:

Քայլ 2

Ներկայացվում է հայ զինվորների արտաքին տեսքը և մարտական ոգին: Քայլ
3
Ներկայացվում են հայկական բանակին պատկանող զենքերը
Քայլ 4
Ներկայացվում է Հայոց ձորի, Արածանու, Ձիրավի,Ավարայրի, Հալիձորի ճակատամարտերը:

Կշռադատման փուլ

Քայլ 1

Պաստառին ներկայացվեցին ճակատամարտերի արդյունքների, նշվեցին մի շարք տվյալներ , դուրս բերվեցին առանցքային գաղափարներ։

Քայլ 2

Դիտեցինք կարճամետրաժ ֆիլմ Հայկի և Բելի ճակատամարտի մասին։

Քայլ 3

5-րոպեանոց շարադրանքի միջոցով սովորողները դարձան Հայկ Նահապետի զինվորը և ներկայացրեցին ճակատամարտը իրենց աչքերով։

Քայլ 4

Հանձրարավեց տնային աշխատանքը։

Վերլուծություն

Դասի արդյունավետությունը զգալի է, երբ տեղի է ունենում միջառարկայական կապ, երբ դասանյութը մատուցվում է մի քանի առարկաների միջոցով,մեր պարագայում Գրականության, Հայոց պատմության և ՆԶՊ առարկաների միջոցով մենք իրականացրեցինք հայրենասիրական դաստիարակություն և ձևավորեցինք արժեքային համակարգ։ Սովորողները ձեռք բերեցին ամուր գիտելիքներ. համեմատենք դասի արդյունավետության աստիճանը համակցված դասին և միայն ՆԶՊ առարկայի դասավանդման ժամանակ։



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ռազմահայրենասիրական դաստիարակություն իրականացնելու լավագույն միջոց է ՆԶՊ առարկան և այդ դասին դասավանդվող նյութը ։

2. Միջառարկայական կապերի միջոցով կարելի է դասը դարձնել առավել արդյունավետ , իսկ մեր առջև դրված նպատակներին կարելի է հասնել ավելի արագ։

3. Սեփական գիտելիքների հարստացումը, կարողությունների և հմտությունների դրսևորումը և կոլեգաների հետ համագործակցությունը բացառիկ դեր ունեն սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման ժամանակ։

4. Միայն այն դեպքում կարելի է արդյունավետ և նպատակասլաց ղեկավարել սովորողների զարգացումն ու դաստիարակությունը, երբ տարվող աշխատանքները կառուցված են նրանց տարիքային առանձնահատկությունների իմացության և դրանց հաշվառման հիման վրա։

5. Փորձը ցույց է տալիս,որ մանկավարժական շատ հիմնախնդիրներ հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ է դրսևորել ստեղծագործական մտածողություն:

6. Ազգային արժեհամակարգով երիտասարդ սերնդի ձևավորման գործում կարևոր դեր է խաղում հայրենասիրական դաստիարակությունը, որով սերմանվում է հայրենիքի հանդեպ սեր և նվիրվածություն, երկրի առաջընթացին սեփական ջանքերով նպաստելու ձգտում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Անաստասյան Բ. Հ., Ազգային ավանդույթների, սովորույթների դերը երեխաների ընտանեկան դաստիարակության գործում, Ընտանիք և ազգային հոգեբանություն նյութերի ժողովածու, Եր., ՀՀ լուսավորության նախարարության մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտ, 1991,

Օհանյան, Վ., Մարգարյան Ս., Առաքելյան Վ., Գաբրիելյան Հ., Ղազարյան Լ., Աստանյան Վ., Ալավերդյան Ռ., Մաթևոսյան Հ., Վիրաբյան Ա., Հովհաննիսյան Ս., Նախնական զինվորական պատրաստություն, 9-րդ դասարան, Երևան, 2015,

Сухумлинский В. А., Избранные педагогические сочинения в 3 т., т. 1,

Железовская Г. И., Формирование педагогической интелектуальной культуры // Педагогика, 1995, № 2,